

քուրքերէն երգերը մնացել են անտիպ, ոչ էլ քարգմանած են հայերէն։ Գ. Լե-

ւոնեանի նախաձեռնութիւնը ժամանակին է եւ լստ ամենայնի ողջունելի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍՈՒՄ

Ապրիլ 18-ին, Երեւանում, բացւել է Հայաստանի ճարտարապետների Միութեան կազմակերպած խոշոր ցուցահանդէսը նվիրած հայ հին եւ նոր ճարտարապետութեան։ Հին ճարտարապետութեան յատկացւած քաժնում լուսանկարներով ցուցադրուած են, ըստ զարգացման զլինաւոր շրջանների, Գառնին, Դիլոր, Երերուակը, Աւանը, Զաւարուցը, Մարմաշէնը, Հառինջը, Սահակինը, Հաղբատը, այլ եւ ամբողներ, կամուրջներ, մահարձաններ եւ ուրիշ յուշարձաններ, որոնք ընդգրկում են մինչեւ 15րդ դարի հայ ճարտարապետութիւնը։ Ցուցահանդէսում մեծ տեղ է յատկացւած նաեւ այս յուշարձանների չափագրումներին և վերակազմութեան։ Ներկայացւած են նաեւ ճարտարապետներ Թորամանեանի, Բունիածեանի եւ Մազմանեանի հետազոտական աշխատանքները։

Ցուցահանդէսի միւս մասը նվիրած է

Հայաստանի վերջին տարիների նարտարապետութեան, որ դասաւորւած է հետեւալ 4 հիմնական բաժիններում. ա) Քաղաքների եւ գիւղերի յատակազման բաժին, ուր առանձին տեղ է տրւած Երեւան քաղաքին. բ) Հասարակական շենքեր, ուր կենտրոնական տեղ է գրաւում Երեւանի ժողովրդական Տումբ. գ) Բընակարանային շինարարութիւն եւ դ) Գործարանային շինարարութիւն, ուր կարեւոր մաս են կազմում ելեկտրակայանները։

Ցուցահանդէսում առանձին տեղ է տրւած Հայաստանի շինանիւթերին, ուր իբր նմոյշ ներկայացւած են՝ տուփ, բազալտ, գրանիտ, մարմար քարերի տեսակները։

Որոշ տեղ էլ յատկացւած է Հայաստանի Պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետական բաժնի ուսանողների աշխատանքներին։

